

**ՏՊԱԻՐՈՒԹԻՒՆՆԵՐ ՅԻՍՈՒՍԱԲՈՅՐ**

**Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Է Ն**

**IMPRESSIONS OF THE GOSPELS  
OF JESUS CHRIST**

**ԱԼՊԷՌ ԵՆՐԱՏՈՒՆԿԵԱՆ**

**ՀԱՅ-ՔՐԻՍՏՈՆԵԱՅ**

**2001**

# ՏՊԱՒՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՅԻՍՈՒՍԱԲՈՅՐ Ա Ի Ե Տ Ա Ր Ա Ն Ն Ե Ր Է Ն

## “ՓՆՏՈՒԵՑԷ՛Ք, ԵՒ ՊԻՏԻ ԳՏՆԷՔ”

--Մատթ. Է. 7

Յիսուս Քրիստոսի պատուէրը Իր աշակերտներուն պարզ աղէ՛րս մըն էր ըսելով. *«Խնայեցէ՛ք, և պիտի տրուի ձեզի, փնտնեցէ՛ք, և պիտի գտնէք, բախեցէ՛ք, և պիտի բացուի ձեզի, որովհետեւ ով որ խնայէ՛ կը ստանայ, ով որ փնտնէ՛ կը գտնէ, և ով որ բախէ՛ պիտի բացուի անոր»*.

Մարդ ի՞նչ կը փնտնէ և ինչո՞ւ կը փնտնէ: Մարդ իր կորսնցուցած առարկան՝ թանձրացեալ շօշափելի իրը և նիւթը կը փնտնէ, կամ այդ փնտրուածը կրնայ անշօշափելի՝ հոգեկան խաղաղութիւն, միխթարութիւն և երջանկութիւն ըլլալ: Մարդ արարածը, ընդհանրապէս, իր սիրածը կը փնտնէ, ըլլայ այդ ուտելիք կամ անձի մը բարեկամութիւնը և մտերմութիւնը: Մարդկային յոգնած մարմինը կազդուր կը փնտնէ, իսկ հոգին՝ Լոյս:

ԱստուածՈրդի Յիսուս հրաժարեցաւ լուսափայլ երկնքի սրբութենէն, թողուց Իր Փառքը և ստեղծագործ աշխատանքը ու եկաւ երկիր որպէսզի կորսուածը փնտնէ և փրկէ--Ղուկ. ԺԹ.10: Յիսուս ինչո՞ւ եկաւ կորսուածը փնտնելու և զայն գտնելու, որովհետեւ Ան կը սիրէ՛ր Իր աշխատանքին արդիւնքը՝ պակը մարդը: Միթէ հզօր Արարիչ մը չէ՞ր կրնար ակնթարթի մը մէջ նոր մարդ մը եւս ստեղծել, փոխանակ կորսուածն ու անհնազանդը փնտնելու և փրկելու զայն: Աստուած ինչո՞ւ համար սիրեց համայն աշխարհը ու Իր Միածին Որդին դրկեց որպէսզի փրկէ մարդաշխարհը մահուանէ:

Այսօր իսկ, մարդկօրէն եթէ խորհինք, կը տեսնենք թէ, ծնողք մը իր կոյր կամ հաշմանդամ զաւակը չի մահացներ խորհելով թէ փոխանակ իր բոլոր կեանքը այս մէկ խեղանդամ զաւակը ինամելու, կրնայ Բանի մը հատ առողջ զաւակներ ունենալ և զանոնք ինամել, մեծցնել և դաստիարակել: Ինչո՞ւ, որովհետեւ զաւակ մը իր ծնողքին ոսկորն ու մարմինն է: Երկնապէս ալ, մարդ արարած Աստուծոյ կերպարն ու նմանութիւնն է:

Աշխարհ երկրագունդին բոլոր բոյսերն ու կենդանիները ստեղծուեցան երկրին ջուրէն ու անոր հողէն: Որովհետեւ Աստուած,

շուրին ու հողին հրամայեց և իշխանութիւն տուաւ անոնց որ կեանք արտադրեն՝ կենդանիներ, թռչուններ, բոյսեր և ծառեր:--Մնն. Ա. 20 --25: Իսկ երբ եկաւ կարգը մարդ արարածին ստեղծագործութեան, Աստուած ըսաւ.

«Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս **մարդ ընենք**, և ծովու ձուկերուն ու երկինքի թռչուններուն և անասուններուն ու բոլոր երկրի ու երկրի վրայ սողացող բոլոր սողուններուն թող իշխէ:»--Մնն. Ա. 26:

Առ. Մալխասեանց Հայերէն Բացատրական Բառարանը սապէս կը լուսաբանէ **"ընել"** բառը: Աշխատանք կատարել: Պարապ չնստիլ, միշտ բան մը ընել: Սգտագործել, պիտանի դարձնել է: Կատարել և իրագործել: Բարութիւն կամ լաւութիւն անել (բարիք գործել) է:

Մարդ արարածը, նման անասուններու և բոյսերու նման չստեղծուեցաւ, այլ՝ յօրինուեցաւ և հնարուեցաւ: Մարդակերտումի եղելութեան ընթացքին, Աստուած ճարտարապետական խորհուրդ և իմացական կարողութիւն դրաւ մարդուն մէջ, ըսելով.

**«Մեր պատկերին ու մեր նմանութեանը պէս մարդ ընենք»:**

Աստուած որեւէ անասունի կամ գոյացութեան Իր պատկերն ու նմանութիւնը չէ տուած, այլ մի միայն մարդ արարածին: Օրինակ, բոլոր տպագրական մեքենայէ ելած նկարները ջուկայի մէջ կը ծախուին ոչինչ գնով մը, սակայն նախատիպ կամ սկզբնատիպ նկարչութիւնը հուշակաւոր արուեստագէտին, աճուրդներու մէջ կը ծախուի միլիոնաւոր տոլարներու: Ու եթէ այդ նախատիպը որեւէ կերպով վնասուի, հազարաւոր տոլարներ կ'արժէ գայն նորոգելը:

Նոյնպէս ալ մարդ արարածին շինութիւնը նախատիպ մըն էր Աստուծոյ մէկ ծրագրին: Ի՞նչ էր այդ ծրագիրը, մարդ արարած օր մը պիտի գիտնայ: Մարդկային ներկայ գիտութեամբ կրնա՛նք հետեւցնել ու գիտնա՛լ թէ մենք՝ մարդ արարածներս բացառիկ և արտակարգօրէն արժեքաւոր արարածներ ենք Աստուծոյ համար: Որովհետեւ Յովհաննէս առաքեալ կը բանայ երկինքը ու կ'ըսէ մեզի՝ մարդ արարածներուն.

**«Աստուած այնպէս սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ Իր միածին Որդին տուաւ, որպէսզի ով որ հաւատայ անոր՝ չկորսուի, այլ ընդունի յաւիտենական կեանքը»:**

Վերոյիշեալ համարը, իր բազմաթիւ գործածութեան պատճառաւ կորսնցուցած է իր խորհրդապաշտ հայեցողութիւնը: Ընդհանրապէս վերոյիշեալ համարը գործածողներ կ'ուզեն ցոյց տալ թէ Աստուած որչափ սիրած է աշխարհը, սակայն առանց բացատրելու թէ Աստուած *ինչո՞չ* սիրած է մարդ արարածը: Աստուած սիրած է մարդ արարածը խորապէս, որովհետեւ Իր կերպարէն, մասնիկ մը, և Իր նմանութենէն, նմոյշ մը ստացած է մարդ արարածը: Հետեւաբար Աստուծոյ համար մարդ էակը չափազանց արժեքաւոր գոյացութիւն մըն է: Մեծ աշխատանքով ձեռք բերուած արարչագործութիւն մըն է մարդ արարածը Աստուծոյ համար, զոր մէկ բամբուջտով չարը կրնայ մահացնել զայն:

Աստուած, ազատագրելու համար մարդ էակը չարին ու մահուան ձեռքէն, կ'ուղարկէ Իր Որդին աշխարհ, որպէսզի մարդկութիւնը փրկուի: Սակայն ափսոս, որ մարդկութիւնը այլատրած ու դարձած է գայլամարդ: Աստուածապատկան մարդ էակը, իրեն եկող Փրկչին մէջ փոխանակ տեսնելու իր Ազատարարն ու զինք սիրող Հօր Աստուծոյ կերպարն ու նմանութիւնը, կը տեսնէ միայն մրցակիցի, թշնամիի և գրաւողի մը մօտենալը: Յիսուս եկաւ աշխարհ, ո՛չ թէ պարտադրաբար տիրանալու և նուաճելու մարդու անձնաւորութիւնը, այլ՝ երաշխաւորելու անոր յաւիտենական կեանք հրապուրելով, առինքնելով մարդ արարածը Իր սիրո՛յն, ծառայութեան և զոհողութեան ճանապարհով:

Յիսուս եկաւ աշխարհ, փնտռեց կորսուած մարդկութիւնը և հրաւիրեց զայն Հօր Աստուծոյ սիրոյն, ապահովութեան և խնամքին, ըսելով.

*«Եկէ՛ք ինձի, քոյրք յոգնածներ և բեռնաւորուածներ, և ես պիտի հանգստացնեմ ձեզ: Իմ լուծս ձեր վրայ առէ՛ք և սորվեցէ՛ք ինձմէ, որ հեզ եմ և սրտով խոնարհ, և ձեր անձներու ն հանգիստ պիտի զտնէ՛ք, որովհետեւ իմ լուծս բաղք է և իմ բեռս՝ թեթեալ»:*

«Ան որ կը մօտենայ Աստուծոյ պարտի հաւատալ թէ Աստուած կայ և վարձահատոյց կ'ըլլայ անոնց՝ որոնք կը փնտռեն Ձինք»--Եբր. ԺԱ. 6: Գերբնականին մէջ զԱստուած փնտռել կը նշանակէ փնտռել Աստուած **հոգիով և ճշմարտութեամբ**: Ամենազօրաւոր ձայնը՝ մանկան մը լալու ձայնն է, երբ ան իր մայրը կը փնտռէ: Մենք զԱստուած կը փնտռե՞նք, աղօթքով: Մենք զմեզ կորսուածներ զգացա՞ծ ենք: Զգացա՞ծ ենք թէ մենք թողելով

Յիսուս Բրիստոսի պատուերները կ'ուզենք կատարել մեր ազգային աւանդութիւնները և հաւատալ միայն մե՛ր եկեղեցիին վարդապետութիւններուն ու հաւատալիքներու և առաւել ըլլալով, ծո՛ւռ նայիլ տարբեր եկեղեցիներու հաւատալիքներուն, մինչդեռ մեր Տէրը պատուիրած է մեզի ըսելով.

**«Եթէ դուք գիրա՛ր սիրէք՝ առով ամէնքը պիտի գիտնան թէ դուք իմ աջակերտներս էք»:**

Յիսուս Բրիստոսի աջակերտող մը փնտռելու չէ ի՛ր ազգային հաւատալիքը, իր ազգային աւանդութիւնը Բրիստոսի աստուածայայտնութեան մէջ, ինչպէս Հրեաները ըրին ու խաչա՛ծ եղան իրենց Փրկիչը և Տէրը: Յիսուս Բրիստոսի աստուածայայտ պատուերները կը գերազանցե՛ն ազգայինն ու պետականը: Յիսուս Բրիստոսի ճառագայթող յաւերժաբոյր ճշմարտութիւնները կը գերազանցեն մարդկային ու ազգային նախապաշարումները, և մարդ արարածը կ'առաջնորդեն դէպի եղբայրութիւն միութենականութիւն և սիրոյ Ակնադրիւրը՝ Աստուծոյ: Համայն մարդկութիւնը սիրող Յիսուս Փրկիչ ըսաւ.

***«Նոր պատուիրան կու տամ ձեզի, որ սիրէք գիրար. ինչպէս ես ձեզ սիրեցի, դուք ալ սիրեցէ՛ք գիրար»:***

Ա՛յս ոսկեղէն պատուիրանն է որ մենք, որպէս աջակերտները Յիսուսի փնտռելու ենք անձանձիւօրէն մինչեւ տեսնենք մեր եղբայրը և բոյրը օտարական կարծուածի մը մէջ: Բրիստոնեայ ըլլալ, ոչ միայն Հաւատոյ Հանգանակ մը արտասանել է եկեղեցիներու մէջ ամէն Կիրակի օրը, այլ ***սիրել և ծառայել*** է որեւէ մէկուն, որովհետեւ այդ օտարականին մէջ տեսանելի կ'ըլլայ մեր Փրկիչը Յիսուս, եթէ բոլոր սրտով սիրենք Ձինք:

Յիսուս եկաւ փնտռելու կորսուածը՝ մեղաւորը, ջուարածը, լքուածը, հիւանդը և մարդկային ընկերութենէ լքուածը: Որո՞նց կը հիւրասիրենք մենք, որո՞նց կը բարեւենք երբ եկեղեցի կ'երթանք մեր բարեկամներուն միայն, թէ առաջին անգամ եկեղեցի եկող անծանօթի մը, ու յետոյ բարեկամի մը: Եկեղեցի նոր եկող մը ճանչնալը ջատ դիւրին է: Նոր եկողները բարեկամ չունին, ու կը դիտեն եկեղեցւոյ առաստաղը...:

Յիսուս երբ եկաւ մարդաշխարհ, դիտեց լքուած մարդկութիւնը, խղճաց անոնց վրայ և բժշկեց կոյրերը, հիւանդները և կաղերը: Ան ըսաւ աւանդապաշտ կրօնաւորներուն և կեղծաւոր կղերներուն.

**«Առողջներուն բժիշկներ պէտք չեն, այլ՝ հիւանդներուն: Ես չեմ եկած արդարները կանչելու, այլ՝ մեղաւորները՝ ազազխարութեան»--Ղուկ. Ե. 31:**

Առանց իմաստաւորելու հաւատքը՝ Յիսուսի շնորհած աստուածայայտնութիւնը, մեռած ուժ մը, ու եկեղեցին անիմաստ պերճանք մը կը մնան: Ո՞վ պիտի իմաստաւորէ Յիսուսի խօսքերը եթէ ոչ դո՛ւն և ես, մեր ծառայութեամբ և ուրիշները սիրելով: Ինտելեա՞ծ ենք Յիսուսի: Ունի՞մք Անոր սիրոյն հպումը և կանչը մեր հոգւոյն մէջ: Յիսուս Ի՞նք դաստիարակած է մեզ, թէ կարգ մը աստուածաբան կարծեցեալներ: Պիտի վկայենք Յիսուսի ճշմարտութիւնը որպէս լրաստութի՞ւն, որոնք խախտելով ամէն տեսակի բարոյական սկզբունք ու չափանիշ կը զբաղին թերթ վաճառելու միակ մտահոգութեամբ, թէ ոչ մեզ ցնցո՞ղ և սթափեցնող Աւետարանիչնե՛ր ըլլալ կը ջանանք:

Իւրաքանչիւր անձ, որ ունեցած է հպումը Յիսուս Զրիստոսի և փոխակերպուած՝ բժշկուած է, Յիսուս կ'ըսէ անոր. «Տունդ գնա, բուրնտանիփիդ մօտ, և անոնց պատմէ՛ ինչ որ Տէրը ըրաւ քեզի և ինչպէ՛ս ողորմեցաւ քեզի»--Մարկոս Ե. 19: Աստուածային գործունեութեան մէջ կոչոււմը անհրաժեշտութիւն է, սակայն **ընտրեալ** ըլլալը կանչուողի՞ն կամքէն ու նուիրումէ՞ն կախեալ է: Կոչումը, ծնունդով մարդու էութեան մէջ Աստուծոյ շնորհքն է: Ո՞ւր է Հայ Եկեղեցին, որքանո՞վ տէր է իր կոչումին ու առաքելութեան: Երեսուն հազար Հայ կայ Թորոնթօ Բաղափին մէջ: Զանի՞ հոգիի տան դուռը զարկած են եկեղեցւոյ սարկաւագները և ծխական խորհուրդի անդամները: Ո՞ր ընտանիփին հիւանդի մը սնարին աղօթած են որպէսզի բժշկուի: Այս պարտականութիւնները երեսակայութիւններ չեն, այլ Յիսուսի Եկեղեցիին շնորհուած սպասաւորութիւնը:

Գաղափարի մը նուիրուած անհատը կամ գործիչը պէտք է ունենայ իր հոգիի պայծառակերպութեան պահերը, անդրադառնալու համար իր հոգւոյն էութեան, ու գիտակցելու համար իր ձգտումներուն ու առաքելութեան: Տիթրիխ Պոնիֆրը, Գերմանացի աւետարանիչը, որ նահատակուեցաւ Հիթլերի օրով, ըսած է.

***«Յիսուս երբ կանչէ մէկը՝  
կը հրաւիրէ զայն նահատակուելու»:***

Քրիստոնեան կանչուած է ու հրաւիրուած ներագրել աշխարհի: Աշխարհ ենթարկուած է եկեղեցիին, թէ եկեղեցին դարձած է աշխարհական: Աստուած մեզ հրաւիրած է դիւրին գործի: Աստուած կ'ուզէ որ համագործակցինք Իրեն հետ, և հրաւիրե՛նք Ձինք մեր կեանքին մէջ: Մահասփիւռ Բաղապատկան դէմ կանգնած է Քրիստոսի կենսանորոգ կանչը: Աստուածային շնորհք է ստանալ տեսիլք, լոյս, պատգամ ու կոչում: Յիսուսի Յարութեան խորհուրդէն կը ծնի տեսիլքը յաւիտենական կեանքի: Ֆիզիկական դժուարութիւնները արհամարել գիտցող, ու մանաւանդ տեսիլք և իսէալ ունեցող, և այդ տեսիլքին լոյսովը զօրացած՝ հայ մարդուն տեղն է՝ աշխատելու դաշտը, ներկայ աստուածամերժ դարը:

Տեսիլքը ինքնանպատակ չէ, այլ միջոցն է գերագոյն նպատակի մը համար: Յիսուս կ'ըսէ Պօղոս առաքեալին. *«Երբ էրեւցայ՝ որպէսզի ինձի օգնական դարձնեմ և վկայ՝ տեսածներուդ և դեռ տեսնելիքներուդ՝ որոնցմով պիտի երեւիմ ինձի»*--Գործք ԻԶ, 18: Տեսիլք ունեցող երիտասարդներու՛ պէտք ունի Աստուած և Հայ ժողովուրդը: Երագող ծերերու պէտք է չունի ո՛չ Աստուած և ո՛չ ազգը: Տեսիլքը կը տեսնուի արթուն վիճակի մէջ: Արթուն ըլլալ կը նշանակէ ժիր, կայտառ, աշխոյժ և գործօն կեանք ունենալ: Այն տեսիլքը որ չի վերածուիր կեանքի, կը դառնայ երազ և ինքնախաբէութիւն:

Երանի՛ անոնց, որ կը հալածուին (որովհետեւ ունին տեսիլք համոզում ու դարձած են անվախ, որոնք կը տեսնեն մահէն անդինը՝ յաղթանակը իրենց տեսիլքին)՝ արդարութեան համար, որովհետեւ անոնցն է երկինքի արժայութիւնը (Աստուծոյ վերջնական յաղթանակը՝ Յիսուսի Երկրորդ Գալուստը: Կրկին փշոտ է ուղիդ.: Կրկին կը ծնիս սուրբ պայքարի մը համար, խոր հաւատով ու վճռակամութեամբ արւցուն: Վսեմ խօսքդ պիտի լուսաւորէ ճամբան կոյր հոգիներուն, որոնք չկրցան տեսնել տեսիլքը վաղուան լուսաշող *«Եկեացէ Արժայութեան Բո»* ն և որոնք չկրցան լսել *«Ոտնած աչնը վարդահեղեղ Արջալոյսին»*:

**Սեպտեմբեր 30, 2001**

**Թորոնթօ**

## ԱՍՏՈՒԱԾԱՅՐԱՇ ՄԱՐԴԵՂՈՒԹԻՒՆ

Քրիստոնեութիւնը, Աստուծոյ Որդւոյն Մարդեղութեան, և մարդու առաւել մարդացման յայտնութիւնն է: Մարդեղեալ Յիսուս՝ Իր կենսատու ներկայութեամբ, գարուն բերաւ, եղբայրութիւն բերաւ մարդկային անապատ երաժշտութեան: Մարդեղեալ Յիսուս բացաւ զոհողութեան գերագոյն ճամբան, աբիւնի ու Գողգոթայի միջոցով: Մարդեղեալ Բան Աստուծոյ հանդիպող անձը կը ստանայ նոր բնութիւն և նոր անուն: Միմոն՝ Յովնանի որդին կ'ըլլայ «Պետրոս»՝ "Նոր ծնունդ" մը:

Հին Կտակարանին մէջ աստուածայայտնութիւնը կը սկսի Մովսէսի օրէնքներով, կը զարգանայ Մադամսներու մէջ, կը բարձրանայ և կը յառաջդիմէ երկնաբարձ գագաթներ մարգարեութեան մէջ ու գերա գոյն կատարին կը հասնի Յիսուսի Մարդեղութեամբ, Անոր ապրումով և զոհողութեամբ: Աստուած եղած էր *ջուկ*, եղած էր *ձայն*, եղած էր *էրեւում*: Քրիստոսով՝ Անոր Մարդեղութեամբ Ան *"եղաւ Մարմին"*: Քրիստոսի Մարդեղութեամբ (անոր մարմնաւոր ջրջանին՝ կրած մարդկային ներութեան փորձառութեամբ), Յիսուս մարդկութիւնը (մարդկային դիւրաբեկութիւնը) ներկայացուց Հօր Աստուծոյ: Որովհետեւ *«Աստուած էր որ Քրիստոսով աջխարհը հաշտեցուց Իրեն հետ և հաշտի չառաւ անոնց (մարդոց) մեղքերը ու տուաւ մեզի հաշտութեան խօսքը»* -- Բ Կորնթ. Ե. 19: Յիսուս խաչին վրայ աղօթեց ըսելով.

***«Հա՛յր, ներէ՛ առոնց, որովհետեւ  
չեն գիտեր թէ ինչ կ'ընեն»***

Յիսուսի զոհաբերումը ոչ թէ միայն խաչելութիւնն էր Գողգոթայի վրայ, այլ Անոր ամբողջական *ապրումը* երկրի վրայ, եղաւ աստուածայայտնիչ սիրոյ ծարայութիւն: *«Այժմ՝ Քրիստոս իր մարդեղութեամբն ու մահուամբը ձեզ հաշտեցուց Աստուծոյ հետ, որպէսզի դուք անոր ներկայանա՞՞մ մահուր, անքի՞ծ և անարատ»* -- Կողոս. Ա. 22: Հաւատացեալ քրիստոնեայի մը կեանքին երկրէն, մշակութիւնն է Աստուծոյ հետ իր նոր յարաբերութեան, որ մեզի բարոգուեցաւ Քրիստոսի Մարդեղութեամբ: «Յիսուս՝ Աստուծոյ մարմնացեալ ներկայութիւնն էր երկրի վրայ»: Մոյն պատճառաւ Ան

ըսաւ. «*Ա՛ն որ Ջիւ տեսաւ, Հա՛յրը տեսաւ.*»--Յով. ԺԴ. 9:

Քրիստոսի Մարդեղութեան ժամանակաշրջանին, մարմինը ստորադասեալ արժեքներու կարգին կը պատկանէր: Հոգի՛ն էր շեջտուածը, մի՛տքն էր կարելորդ: Պիլթակորոս Սամուսացի--570-500, ան Քրիստոսէ առաջ Զ. դարու մէջ կ'ապրէր: Իր ուսուցման նպատակը գլխաւորապէս բարոյական, քաղաքական ու կրօնական էր: Պղատոն իր ծերութեան իւրացուց Պիլթագորոսի կրօնական խորհրդապաշտ տարերքը: Պիլթակորոս, Սոկրատ, Պղատոն, Կիկերոն, Սենեկայ, առանց քրիստոնեայ ըլլալու, հաւատացին հոգւոյ անմահութեան, հաւատացին խորապէս: Կրօնք և հանդերձեալ կեանք՝ հաշտընթաց են, բացարձակապէս: Պիլթակորոս եղաւ այն անձը որ եւրոպա բերաւ հոգւոյ անմահութեան տեսութիւնը որ ի՛նք եւս ստացած էր զայն Եգիպտացիներէն: (Յիսուս Իրեն հաւատացողներուն "Անմահութիւն" չխոստացաւ, այլ Յաւիտենական կեանք)-- Ինչո՞ւ: Կարդալ Ա. Տիմոթ. Զ. 13:

Ակտեալ առաքելական դարէն, Քրիստոնեայ եպիսկոպոսներ ու ջատագովներ, որպէսզի կարենան իմաստասիրական դատողութեամբ վիճիլ աշխարհական իմաստասերներու հետ, և զանոնք համոզել դէպի Յիսուսի աստուածայայտնութեան, իրե՛նք եւս դարձած էին վկայեալ իմաստասերներ: Ա. Կիպրիանոս, նոյնիսկ ինքզինք կը կոչէր մոգ, Որոգիսէս, Տէրսիւղիանոս, Լիոնի Երանոս Եպիսկոպոսը և նոյն ինքն Ա. Օգոստինոս իրենց դարուն մէջ Քրիստոնեայ իմաստասերներ էին: Յիսուսի Եկեղեցւոյ այս տիտան առաջնորդները երբ իմացան Պիլթակորոսի մարդկային "Հոգւոյ անմահութեան" տեսութիւնը, որ ընդունուած էր Սոկրատէսէ, Պղատոնէ և Արիստոտելէ, իրե՛նք եւս ընդունեցին սոյն տեսութիւնը իբրեւ Յիսուսապատկան ասոյթ: Վերոյիջեալ տիտան Քրիստոնեաները ջփոթեցին "յաւիտենական կեանք"ը "անմահութիւն" բառին հետ, ու ցարդ Ծննդոց Բ.7-րդ համարը սխալ կարդալով կը հետեւին իրենց նախապաշարումին, ու կը հաւատան թէ Աստուած Ադամին "անմահութեան" ջունչ փչեց և Ադամ ստացաւ անմահութիւն:

Մինչդեռ Ծննդոց գրքին մէջի գրութիւնը կ'ըսէ. «Տէր Աստուած գեանին հողէն ջինեց մարդը, և անոր ոնգունքներուն *կենդանութեան ջու նչ* փչեց, ու մարդը *կենդանի հոգի* եղաւ», ու ո՛չ թէ *ան/անութեան* հոգի ստացաւ: Պօղոս առաքեալ "անմահութիւն" բառը կը գործածէ մի միա՛յն Աստուած Ճշմարիտին համար երբ կը դաստիարակէ իր Տիմոթէոս աշակերտը ըսելով.

*«Յիսուս իր ծախանակին յայտնի պիտի դարձնէ Երանելին և*

*միակ չզօրը, թագաւորներու թագաւորը և տէրերու Տէրը. Ան՝ որ միայն Ի՛նք ունի անմահութիւնը և կը բնակի անմատչելի լոյսի մէջ՝ զոր մարդոցմէ ոչ ոք տեսած է և կարող է տեսնել. Անոր պատի՛ւ և զօրութի՛ւն յաւիտեանս: Ամէն»--Ա Տիմոթ. 2.15-16:*

«Զոր յիւր ժամանակս ցուցցէ Երանելին և միայն չզօր, թագաւոր թագաւորաց և Տէր տէրանց. Որ միայն ունի զանմահութիւն՝ բնակեալ ի լոյս անմատոյց. զոր ոչ ոք ետես ի մարդկանէ և ոչ տեսանել կարող է, որում պատիւ և զօրութիւն յաւիտեանս, Ամէն»:

Մարդուն այս հողեղէն մարմինը իր գործունէութեամբ ու կամքով, կ'ապշեցնէ գիտարուեստի մասնագէտները, որովհետեւ պատահականութեամբ չի կրնար ջինուած ըլլալ այս մարմնեղէն կառոյցը: Պատահականութիւնն ու դիպումածը, մի միայն ժխտական դեր կը կատարեն՝ կործանարար ու ո՛չ երբեք ջինարար: Մարդկային մարմնին մէջ կան ո՛չ միայն պարզ տարրեր և բաղադրեալներ, այլեւ՝ ելեկտրականութիւն, մագնիսական ուժ, ուրիշ ուժեր, *զորս գիտութիւնը տակաւին չէ՛ մանչցած*: Պիտի յառնես գերեզմանէն՝ մարմնով յաերծապէս գեղեցիկ, ու յաւիտենական կեանքով: Պիտի տաճարանայ մարմինդ որպէս Տիրոջ տաղաւար: Զրիստոնէութիւնը ձեւ ու մարմին, իմաստ ու նուիրում տուաւ հաւատքի պայքարին: Մարմինը կը կատարէ ա՛յն, ինչ որ հոգին կը պատուիրէ: Երբ մարմինը տիրապետէ հոգիին, այդ մեղանչում է: Մարդ արարած մարմին և հոգի, սակայն իրապէս մէկ են: Մարդկային մարմինն ու հոգին Աստուծոյ կամքին արտայայտութիւնն են: "Հոգի" բառը կ'ակնարկէ մարդկային կեանքին և անոր ընդհանուր անձնաւորութեան: "Հոգի" նաեւ կ'ակնարկէ մարդու ներքին սկզբունքը և համոզումը: Ինչ որ մարմնական է, *զգայի* է, իսկ ինչ որ անմարմին՝ *իմանայի*: Ինչպէս որ բանաւոր էակը իր մարմնով կը գործէ, այնպէս ալ Զրիստոս Իր Մարմնով՝ *Էկեղեցիո՛ւ* կ'ուզէ գործել մեր օրերուն:

Անստուեր Լոյս Յիսուս, աւարտելէն յետոյ Իր առաքելութիւնը աջխարհի վրայ, Իր նուիրական պատուիրակութիւնը թողուց ո՛չ թէ երկնային հրեշտակներուն, այլ՝ Իր ներշնչեալ աջակերտներուն՝ Եկեղեցիին: Մինչեւ այսօր Յիսուս կը գործէ Ի՛ր Եկեղեցւոյ միջոցով: "Եկեղեցի" բառը չի նշանակեր հիմնարկուած հաւաքավայրերը իրենց վարչական կազմով ու գմբէլթախաչերով: Յիսուսի Եկեղեցին, այս աջխարհի վրան կը ներկայացուի ջնորհիւ ա՛յն հաւատացեալներու, նուիրեալներու և հաւատարիմներու, որոնք կը

գտնուէին հիմնարկուած եկեղեցիներու մէջ այնպէ՛ս ինչպէս Միմիոն Ծերունին և Աննա Մարգարեուհին կը գտնուէին Երուսաղէմի տաճարին մէջ: Այդ տաճարին Բահանան և ո՛չ իսկ Ղեստացի հաւատացեալներ ճանչցան Յիսուս Զրիստոսը Որուն գալուստին կը սպասէին, իրենց *աւանդակա՛ն*, ու ազգայի՛ն *վարդապետութեամբ*:

Աստուածայայտնիչ Յիսուսի Մարմինը՝ Եկեղեցին, այսօր ալ կը գործէ շատ մը Բահանաներու, պատուելիներու ու նաեւ աշխարհականներու միջոցով: Յիսուս Զրիստոս կարիքը չունի միայն ձեռնադրեալ կղերականութեան: Անոր փնտռածը հաւատարիմ, Բաջ և կորովի՛ հաւատացեալներ են, որոնք ուրացած են իրենց անձերը, ու պատրա՛ստ են նուիրելու իրենք զիրենք նոյնիսկ *որպէս ոչխարներ գայլերու մէջ*:

Զրիստոսի Եկեղեցին կը պարծենայ նման Պօղոս առաքեալի երբ ան կ՛ըսէ, թէ հրեաներէն հինգ անգամ Բառասունէն մէկ պակաս ծեծ կերած է, երեք անգամ ձաղկուած, մէկ անգամ Բարկոծուած և երեք անգամ նաւաբեկութեան բռնուած: Պօղոս անցուցած է վտանգներ՝ գետերէն, վտանգներ՝ աւազակներէն, վտանգներ՝ ազգակիցներէն, վտանգներ՝ հեթանոսներէն, վտանգներ՝ Բաղաբի մէջ, վտանգներ՝ անապատի մէջ, վտանգներ՝ ծովու վրայ, վտանգներ՝ սուտ եղբայրներէ: «Եթէ պէտք ըլլայ պարծենալ, Եկեղեցին իր տկարութեան վերաբերեալ բաներով կրնայ պարծենալ--Բ. Կորնթ. ԺԱ. 24-31:

Յիսուս ինչո՞ւ Իր Եկեղեցիով կ՛ուզէ գործել, չենք գիտեր: Կոռնելիոսի և Պետրոսի պատմութիւնը շատերուս ծանօթ է: Կեսարիոյ մէջ Կոռնելիոս անունով մարդ մը կար, հարիւրապետ մը՝ "Իտալական" կոչուող գունդէն: Օրուան իններորդ ժամուն տեսիլքի մէջ ան յայտնապէս կը տեսնէ Աստուծոյ հրեշտակը, որ կ՛ըսէ իրեն՝ «Ըն աղօթքներդ և բոլորմութիւններդ, որպէս յուշարձան, Աստուծոյ առջեւ ելան: Արդ, մարդիկ որկէ՛ և կանչէ՛ Միմիոն անունով մէկը, որ Պետրոս կը կոչուի. ան կը մնայ Միմիոն անունով կաշեգործի մը բով, որուն տունը ծովուն մօտ է:

Երկնային հրեշտակ մը որ կու գայ Կոռնելիոսին որպէս պատգամաւոր ու կը խօսի հետը, ինչո՞ւ արդեօք ա՛ն Աստուծոյ Թագաւորութիւնը չի բացատրեր Կոռնելիոսին, ու պէտք կ՛ըլլայ Պետրոսին գալը մինչեւ Կեսարիա որպէսզի Բարոզէ: Պետրոս երբ կու գայ Կոռնելիոսին, ո՛չ Բաղաբական և ո՛չ ալ ազգային, հոռմէական ու հրեական նիւթերու մասին կը խօսի, այլ՝ Յիսուսը կը Բարոզէ, Անոր ըրած հրաջքները, բժշկութիւնները և սքանչելի

Յարութիւնը կը պատմէ: Պետրոս առաքեալ հրեայ մը ըլլալով կը պատմէ նաեւ մեղքերու թողութիւնը առանց պատարագի և բաւութեան: Պետրոսի բարոզած ճամբան Յիսուս Քրիստոսի հաւատալով և Անոր Անունով ստանալ է մեղքերու թողութիւնը:

Երկրորդ դէպք իրողութիւնը, Եթովպացի ներքինին ղարձի գալն է և Յիսուսի հաւատալն է Փիլիպպոս սարկաւազի ձեռնով:

Տիրոջ հրեշտակը խօսեցաւ Փիլիպպոսին և ըսաւ. «Ելի՛ր և գնա՛ դուն հարաւային կողմը՝ այն ճամբով, որ կ'իջնէ Երուսաղէմէն դէպի Գազա, որ անապատ է»--Գործք Ը. 26: Եւ ան ելաւ գնաց: Եւ ահա Եթովպացի մարդ մը, ... Երուսաղէմ եկած էր երկրպագելու, վերադարձին, իր կառքը նստած, Եսայի մարգարէ կը կարդար: Հոգին ըսաւ Փիլիպպոսին. «Առաջացի՛ր և հասի՛ր այդ կառքին»։ Փիլիպպոս առաջ վազելով՝ լսեց որ ան Եսայի մարգարէէն կը կարդար. և ըսաւ. «Կը հասկնա՞ս արդեօք ինչ որ կը կարդաս»։ Իսկ ան ըսաւ. «Ինչպէ՞ս կրնամ հասկնալ, եթէ մէկը չառաջնորդէ զիս»։ Եւ ինդրեց Փիլիպպոսէն, որ կառքը բարձրանայ ու նստի իր բովը:

Ներքինին խօսեցաւ Փիլիպպոսին և ըսաւ. «Կաղաչեմ քեզի, մարգարէն որո՞ւ համար կ'ըսէ այս բանը: Փիլիպպոս բացաւ իր բերանը և այդ գրէն սկսելով անոր *աւետարանեց Յիսուսը*: Երբ հասան ջուրի մը մօտ, ներքինին ըսաւ. «Ահա՛ ջուր, ի՞նչ բանը կ'արգիլէ զիս մկրտուելէ»։ Փիլիպպոս ըսաւ անոր. «Եթէ քու ամբողջ սրտովդ կը հաւատաս՝ կարելի է»։ Ան պատասխանեց. «Կը հաւատամ թէ Յիսուս Քրիստոս Աստուծոյ Որդին է»։ Երկուքը միասին ջուրը իջան. եւ Փիլիպպոս մկրտեց Եթովպիացին--Գործք Ը. 26-40:

Որքան անհրաժեշտ է ունենալ Աւետարանի գիտութիւնը և Յիսուսի մտերմութեան փորձառութիւնը: Կուգե՞ս ըլլալ Յիսուսի Մարմինը՝ Եկեղեցին: Ազխարհական ըլլալդ արգելք մը չէ: Ներկայ ժամանակաշրջանին մէջ, իմ համեստ կարծիքովս, առաւելութիւն է նոյնիսկ:

**Սեպտեմբեր 8, 2001**  
**Թորոնթօ**

# ՅԻՍՈՒՍ ԻՐ ԱՅԳԻՆ ՉՔԱՆԴԵՅ ԱՅԼ՝ ՈՒՐԻՉ ՄՇԱԿՆԵՐՈՒ ՅԱՆՁՆԵՅ

--Մատթ. ԻԱ. 33-46

Ի՞նչ ըսել կ'ուզէ Յիսուս, "Զար Մշակներուն" առակով:  
Յիսուս, թէեւ "առակ" կը կոչէ այս պատմուածքը, սակայն խորհրդա-  
նըշական պատկեր մըն է ան մեր երկիր մուլտրակին կառուցման  
մասին:

Հին Կոսկարանին առաջին էջին ու համարին մէջ կը  
կարդանք.

*«Այիզքէն Աստուած Երկինք ու երկիրը ստեղծեց: Եւ երկիր  
անձեւ ու պարսպ էր. և անոքս նոյնն վրայ խաւար կար. և Աստուծոյ  
Հոգին ջուրերուն վրայ կը ջարժէր»: ... Եւ Աստուած ցամաքին  
անունը Երկիր դրաւ, ու ջուրերուն ժողովքը Ծովեր կոչեց: Եւ ըսաւ  
Աստուած, Երկիր կանայ խոտ բուսցնէ, սերմ տուող խոտ, և իր  
սեւտակին պէս պտուղ տուող պտղաբեր ծառ, որ իր մէջ իր սերմը  
ու սեւնայ երկրի վրայ. ու այնպէս եղաւ.»--Ծնն. Ա.1-12:*

Վերոյիշեալ սոյն դէպք եղելութիւնը, Յիսուս Իր առակա-  
պատկերութեամբ կը յիշեցնէ մարդոց ըսելով. «Կալուածատեր մը  
կար, որ այգի մը տնկեց և գայն ցանկապատեց ու անոր մէջ հնձան  
փորեց և աջտարակ ջինեց. ապա գայն յանձնեց մշակներուն և գնաց  
հեռու երկիր:

Երբ պտուղի ժամանակը մօտեցաւ՝ իր ծառաները դրկեց այն  
մշակներուն, որպէսզի անեն այգիի պտուղները: Իսկ մշակները,  
բռնելով անոր ծառաները, մէկը տանջեցին, մէկը սպաննեցին, միւսը  
հարկոծեցին: Դարձեալ ուրիշ ծառաներ դրկեց՝ թիւով ջատ ատելի  
բան առաջինները: Եւ անոնց ալ նոյնը ըրին:

Յետոյ իր որդին դրկեց անոնց և ըսաւ. «Թերեւս իմ այս  
որդիէս ամչնան»: Իսկ մշակները, երբ որդին տեսան, իրենք իրենց  
ըսին. «Ա՛ս է ծառանգորդը, եկե՛ք սպաննենք գայն և անոր ծառան-  
գութիւնը մենք սեփականացնենք»: Եւ բռնելով՝ գայն այգիէն դուրս  
հանեցին ու սպաննեցին: Արդ, երբ այգիին տերը գայ՝ ի՞նչ պիտի  
ընէ այդ մշակներուն»--Մատթ. ԻԱ. 33-40:

Ի՞նչ յուզիչ է և միանգամայն որբա՛ն խորիմաստ այն  
պատմութիւնը որ Հոգեւոր ներշնչումով Յիսուս կը պատմէ

հրեաներուն, սակայն Կիսոս որ անոնք մտիկ չըրին ու չհասկցան:

"Այգին" կը ներկայացնէ այս աշխարհ երկրագունդը, որ կը լողայ որպէս կապոյտ կէտ մը անսահման միջոցի տարածութեան մէջ: "Անձեւ ու պարապ երկրին" մէջ, Աստուած հնձան փորեց, աշտարակ ջինեց ու զայն ցանկապատեց՝ ջանաց պաշտպանել զայն: Այս աստուածաշէն երկիր "այգին", Աստուած յանձնեց մշակներուն՝ Իր հաւատարիմ գործակատարներուն, որպէսզի խնամեն ու բարգաւաճեցնեն այգին:

Գործակատարներուն տեսուչ պետը, երբ տեսաւ այգիին զարգանալը, ճոխանալը և յառաջդիմելը իր սրտին մէջ հպարտացաւ ու փոխանակ ջարունակելով ծառայել որպէս հաւատարիմ մշակ իր Տիրոջ, ըսաւ իր սրտին մէջ.

Երկինք ելլեմ ու իմ աթոռս Աստուծոյ աստղերէն վեր  
բարձրացնեմ.

Եւ ժողովքի լեռը, հիւսիսի բովերը բնակիմ,

Ամպերու բարձրութիւններուն վրայ ելլեմ,

Բարձրելոյն նմանիմ,

Բայց ահա դժոխքը կ'իջնես, գութին խորունկ տեղերը.

Քեզ տեսնողները բու վրադ պիտի զարմանան

Ու Բեզի նայելով պիտի ըսեն,

Աս այն մարդն է որ երկիրը կը սարսեր,

Թագաւորութիւնները կը դողացներ,

Աշխարհս անապատ կը դարձներ,

Եւ անոր Բաղաբները աւերակ կ'ըներ,

Ու իր գերիները տուներնին չէր դրկեր:

Ազգերուն բոլոր Թագաւորները

Ամէն մէկը պատուով իր տանը մէջ կը պառկի,

Բայց դուն զարջելի ընձիւղի մը պէս,

Գութի Բարերուն մէջ իջնող

Սրով խոցուած մեռելներուն հանդերձին պէս,

ոտքի տակ կոխուած դիակի պէս

Քու գերեզմանէդ դուրս նետուեցար,

Դուն Թաղումով անոնց հետ չես միանար,

Քանզի բու երկիրդ աւերեցիր

Ու ժողովուրդդ սպաննեցիր,

Չարերուն սերունդը յաւիտեան պիտի չյիջուի:

--Եսայեայ ԺԳ. 13-20

Վերեւ յիշուածը միայն փոքրիկ մաս մըն է այն աստուածայայտնիչ մարգարէին բացայայտած, տաղաչափեալ գրութենէն, ուր ան կը տեսնէ Աստանային հպարտութիւնը, ցանկութիւնը և ըմբոստացումը Աստուծոյ դէմ: Աստանան երբ կը հասնի իր փափաքներուն գագաթը, փոխանակ շնորհակալութիւն յայտնելու իր Արարիչ Աստուծոյն, կը յանձնէ ինքզինք անձնակեդրոն կո՛չը իղձերու մղումներուն: Յակոբոս առաքեալ, իր ընդհանրական թուղթին մէջ կը գգուշացնէ հաւատացեալները հպարտութեան կոյր մեղանչումէ, ըսելով. «Աչ ոք, երբ փորձութեան մէջ կը գտնուի, թող ըսէ, "Աստուծմէ կը փորձուիմ"». Բանի որ Աստուած Ինք ենթակայ չէ փորձուելու չարէն. և չի փորձեր ոչ մէկը: Իւրաքանչիւր ոք կը փորձուի՝ հրապուրուելով և խաբուելով իր ցանկութիւններէն: Այնուհետեւ ցանկութիւնը՝ յղանալով՝ մեղք կը ծնի, և մեղքը՝ հատուննալով՝ կը ծնի մահ»--Ա. 13-15:

Ողորմելի ու թշուառ Աստանան առանց ամչնալու իր անցեալի ըմբոստացումէն, նոյնիսկ կը ջանայ ապստամբեցնել ԱստուածՈրդի Յիսուսը Իր Հօր դէմ ու ցոյց կու տայ Անոր աշխարհի բոլոր թագաւորութիւնները և կ'ըսէ. «Էեզի պիտի տամ այս ամբողջ իշխանութիւնը և ասոնց փառքը, որովհետեւ ինձի սրուած է, և որուն որ ուզեմ՝ կու տամ զայն: Արդ, եթէ դուն իմ առջեւ ինկած երկրպագութիւն ընես՝ բոլորը Բուկդ պիտի ըլլայ»: Այն ատեն Յիսուս ըսաւ անոր. «Եսի՛ս գնա, Աստանա՛, որովհետեւ գրուած է՝ թէ միայն պիտի երկրպագես Բու Տէր Աստուծոյդ և զԱ՛յն միայն պիտի պաշտես»--Դուկ. Դ. 5-7, Մատթ. Դ. 8-10:

Աստանային վերոյիշեալ կաշառները կը ընջանակեն պերճանք, հեշտանք, ճոխութիւն, հարստութիւն, ստացուածք, կարողութիւն, զօրութիւն, իշխանութիւն, համբաւ, հռչակ, իմացական, մտաւորական և մշակութային գիտութիւն, որոնք կը շրջադառուելով կը մերժուին Յիսուս Բրիստոսի կողմէն:

Փորձութիւնները թէպէտ անխուսափելի են ներկայ մարդկութեան, բայց առիթ են նաեւ՝ որ մարդ իր առաքինութիւնները յայտնէ, յաղթող դուրս գայ և հետզհետէ կատարելագործուի--Ա. Պետ. Ա. 6-7: Վեթերան առաքեալ Պողոս կ'ըսէ. «Անոնք որ կ'ուզեն հարստանալ՝ կ'իյնան փորձութեան, որոգայթի և շատ մը անմիտ ու վնասակար ցանկութիւններու մէջ, որովհետեւ բոլոր չարիքներուն արմատը արծաթսիրութիւնն է» --Ա. Տիմոթ. 2. 9-10: Առաքեալը չ'ըսեր "Բոլոր՝ մարդկութիւնը", այլ ան կ'ըսէ. «Անոնք որ կ'ուզեն *հարստանալ*՝ կ'իյնան փորձութեան մէջ:

Մատանան երբ տեսա թէ չկրցաւ նենգութեամբ և խաբեքայութեամբ յարթել անթարգմանելի Մարդեղացեալ Յիսուսը անապատին մէջ, գործածեց տաճարին արծաթաւեր կղերականներն ու քահանաները որպէսզի լռեցնէ Աստուծոյ Թագաւորութիւնը քարոզող Յիսուս Բրիստոսը: Ան կրցա՛ւ մահուան դատապարտել տալ Աւետարանի Առաքեալ Բարդաղէ Յիսուսը, և ա՛յդ ալ խաչի չարչարալի՛ց մահուամբ: Յիսուսն օրերը հազիւ լրացած, Յիսուսի աջակերտները, որոնք տեսան յարուցեալ Տէրը ու շօշափեցին Ձիւն, վկայեցին ընդհանուր Երուսաղէմի ու աշխարհի հեռաւոր ծայրերը ըսելով. «Այս Յիսուսին է որ Աստուած յարութիւն տուաւ, որուն մենք ամէնքս ալ վկայ ենք, բարձրանալով Աստուծոյ աջ ձեռքով, չօրմէն ընդունելով Սուրբ Հոգիին աւետիսը՝ տարածեց զայն, զոր դուք իսկ կը տեսնէք և կը լսէք: Արդ, Իսրայէլի ամբողջ տունը վստահօրէն թող գիտնայ, թէ Աստուած է որ Ձիւն ըրաւ ե՛ւ Տէր, ե՛ւ Օծեալ, ա՛յն Յիսուսը՝ զոր դուք խաչեցիք»--Գործք Բ. 32-39: Յիսուս Բրիստոս, Իր հաւատարիմ ընթացքով դարձաւ չօր Աստուծոյ աշխարհին (Այգիին համայն Տէրը և Աստուծոյ Օծեալը, այսինքն Անյարթահարելի Ապարապետը Հայր Երկնաւորին:

Անձնամատոյց չոգի Յիսուս, վերոյիջեալ առակին մէջ խոստում մը կ'ընէ, որ մեզմէ ջատերուն ու շաղորութենէն կը վրիպի. Տէր Յիսուս այս առակին մէջ կ'ըսէ նաեւ.

*«Տարերը չարաչար պիտի ոչնչացնէ և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու, որոնք բերքը իր ժամանակին պիտի տան իրեն».*

Բարութեան մարմնացեալ անձնականութիւն Յիսուս ալ հեռու երկիր՝ մարդաշխարհ եկաւ այգի մը տնկեց՝ Եկեղեցի մը կազմեց Իր աջակերտներով, և զայն ցանկապատեց՝ պաշտպան եղաւ Եկեղեցիին, ըսելով. *«Ես ձեզի հետ եմ մինչեւ աշխարհիս վախճանը».* Ինձան փորեց և աջտարակ ջինեց՝ Սուրբ Հոգին դրկեց Պենտեկոստէին, ապա զայն յանձնեց մշակներուն՝ առաքեալներուն, և գնաց հեռու երկիր՝ համբարձաւ:

Երբ պտուղի ժամանակը մօտեցաւ: Այս չի նշանակեր միայն մէկ տարուայ պտուղի ժամանակը, այլ բազմաթիւ տարիներու պտուղի ժամանակները մինչեւ Յիսուսի Երկրորդ Գալուստին: Անցնող քսան դարերու ընթացքին, Յիսուս յաճախ դրկած է Իր հաւատարիմ ծառաները: Ի՞նչ կը կարծէք թէ հիմնարկուած և պետութեան ենթակայ եկեղեցիները ըրած են Յիսուս Բրիստոսի ապրո՛ղ ու անոր հաւատարիմ պտղատու ճիւղերուն: Ա՛յն եկեղեցիները, որոնք երկրին պետութեան ու անոր սխալ բաղաճակաւու-

Թիւնը կը ծածկէին, իրենք իրենց իշխանութիւն տուին հալածել ճշմարիտ եկեղեցականները և ւստի գանձում:

Յիսուս Բրիստոսի եկեղեցւոյ մշակներուն պարտականութիւնը՝ շանա՛լ ու ձգտիլ է սրբութեան, հոգիի մաքրութեան և Աստուծոյ հետ հաղորդուիլ է--Ա. Թես. Ե. 23: Վերոյիջեալ առակին ամենա-յատկանշական խօսքն է.

**«Զարեքը չարաչար պիտի ոչնչացնէ և այգին պիտի յանձնէ ուրիշ մշակներու»**--Մատթ. ԻԱ. 40:

Որո՞նք են այն "Ուրիշ մշակները" որոնց պիտի յանձնէ Յիսուս այս մոլորակ աշխարհը որ Ի՛ր խորհուրդին ու ճարտարապետութեան տեսանելի և սեանչելի կառուցումն է: Յիսուս Բրիստոս Իր Երկրորդ Գալուստէն յետոյ, *«երբ որ կործանած ըլլայ բոլոր իշխանութիւնները և ամէն պետութիւն ու զօրութիւն (չարերուն). որովհետեւ Ան պէտք է թագաւորէ մինչեւ որ բոլոր թշնամիները դնէ իր ոտներուն տակ»*: Երբ չարերը չարաչար ոչնչացած են, ա՛յն ատեն Յիսուս պիտի ըսէ. "Եկէ՛ք Իմ Հօրս օրհնած երանելի հեզերը, ու ժառանգեցէ՛ք Երկիրը"--Մատթ. Ե. 5:

Բրիստոսէ մօտ վեց հարիւր տարի առաջ Եսայի մարգարէն իր ներշնչման պահու մտածումներուն մէջ կ'ըսէ.

«Այն Աստուածը որ երկիրը կազմեց,  
Չանկա ջինեց և հաստատեց,  
Չանկա **պարապ տեղ** չստեղծեց,  
Հապա բնակութեան համար կազմեց.  
Տերը ես եմ, ու ինձմէ ուրիշը չկայ:

**Եսայեայ ԽԵ. 18**

Եթէ կան հաւատացեալներ, որոնք կը կարծեն թէ բոլոր Յիսուսի հաւատացողները երկինք պիտի երթան և գիշեր ու ցերեկ Բնար պիտի նուագեն ու ոսկիէ ջինուած փողոցներու մէջ պիտի քալեն, Յիսուսի Աւետարանը աւելի՛ ու շարդութեամբ անգամ մը եւս թող կարդան: Աստուած երբ այս երկիր մոլորակը կահաւորեց ամէն տեսակ նախանիւթով Իր մարդ արարածին համար, ըսաւ անոր.

**«Գործէ՛ երկիրը»**: Աստուած մարդը ծուլութեան համար չստեղծեց, այլ Ան ստեղծեց մարդ արարածը գործելո՛ւ և ստեղծագործ դառնալու համար:

Արդեօք կա՞յ ծնողք մը, որ իր զաւակը մեծնայ, չափահաս ըլլայ ու միայն տան մէջ պարապ ժամանակ անցնէ առանց ուսման

կամ աշխատանքի: Զանի՞ ծնողներ հպարտ և ուրախ պիտի ըլլային այսպիսի զաւակ մը ունեցած ըլլալուն համար: Յիսուս կը զգուշացնէ Իր աջակերտները ծուլութենէ, ըսելով.

**«Ես եմ ճշմարիտ որթատունկը: Եւ իմ Հայրս մշակ է: Ամէն ճիւղ, որ իմ վրաս է և պտուղ չի բերեր՝ ան կը կտրէ զայն»:**--Յով. ԺԵ. 1-2

Այն ճիւղը որ պտուղ չի բերեր, ոչ թէ կը կտրուի ու որպէս գարդ կը գոյատեւէ, այլ *«ան ճիւղը դուրս կը նետուի ու կը չորնայ, և զայն կը հաւաքեն ու կրակը կը նետեն. և ան կ'այրի»*--7:

Աստուած դատարկութիւնը, ծուլութիւնը արգիլելու համար մարդը աշխատանքի լծեց: Բազմաթիւ ակնարկութիւններ կան Աւետարաններուն մէջ, որոնք կը հաստատեն, թէ հալածանքը անբաժանելի մասը պիտի կազմէ քրիստոնէական կեանքին: *«Ձեռք պիտի զարնեն ձեզի և պիտի հալածեն ձեզ»* (Ղուկ. ԻԱ. 12): *«Պիտի հալածուիք Բաղա՛է Բաղա՛»* (Մտթ. ԻԳ. 34): Զրիստոնէայ ըլլալը լուրջ և պատասխանատու գործ է, թեթեւութիւն և սկարութիւն չի ճանչնար, ով որ բարոյապէս թեթեւ է ու սկար, չի կրնար տեղ գրաւել Աստուծոյ արժայութեան մէջ : Աշխատութիւն և բարեգործութիւն զուգրնթաց են Զրիստոնէութեան մէջ:

«Մորվեցուր մեզ, ո՛վ Տէր, տեսնել և օգտագործել ծառայութեան ամէն պատեհութիւն: Թո՛ղ ըլլանք տուողներ՝ առանց փոխարժէքի հաշուելու, պայքարողներ՝ առանց վիրաւորելու, աշխատողներ՝ առանց հանգիստ փնտտելու, ծառայողներ՝ առանց վարձատրութիւն ակնկալելու, այն գիտակցութեամբ թէ Զու կամփոյ է որ կը կատարենք, ամէն»--**Բարսեղ Կեսարացի--326-380**

Յիսուս ըսաւ հրեաներուն. **«Իմ Հայրս մինչեւ հիմա կը գործէ, ուրեմն ես ալ կը գործեմ»:**

**Սեպտեմբեր 13, 2001**

**Թորոնթօ**

# ՔՐԻՍՏՈՆԵՈՒԹԵԱՆ ԵԶԱԿԻ ՈՒ ԲԱՐՁՐԱՐԺԷՔ ՀԱՆԳԱՄԱՆՔԸ

Քրիստոնեությունը եզակի և անկրկնելի գերահրաշ աստուածայայտնություն է երբ բաղդատենք զայն հեթանոս և մարդաստեղծ կրօններուն հետ: Կոապաշտություն մէջ ընկղմած հին հաւատալիքներու մէջ ամէն բան աստուած կը նկատուէր բացի *Աստուած Ճշմարիտէն:*

Կրօնը համաշխարհային երեւոյթ մըն է, այսինքն *ներքին զգացումի* անհրաժեշտություն մը, որ թափուն խորհուրդն է Աստուծոյ: Կրօնական պաշտամունքի առարկան գերբնականն է, ըլլայ ան մտացածին կամ աստուածայայտնություն: Կրօնք հետազօտությունն ու որոնումն է ճշմարտութեան, իսկ Քրիստոնեությունը՝ *«Գտանք Մեսիան»:*

Հոռութեան և յունական դիցաբանությունէն և Պարսկաստանի ճանչցուած աստուածներու առաջին շարքին կու գայ *բեղմնաւորութեան*, և *իմաստութեան*, աստուածուհին՝ Անահիտը, *սիրոյ* և *գեղեցկութեան* Աստղիկը, *Բաջութեան* աստուածը՝ Վահագնը: Պարթեւներուն ազդեցութեան տակ, Արամազդը՝ (Ահուրամազտան) դարձաւ բարություն աստուածը: Ահուրամազտան, Մեծն Աղեփասնդրի յաղթանակին ու Հելլենական մշակոյթին պատճառաւ կորսնցուց իր Իրանական նկարագիրը և դարձաւ տեսակ մը Զեւս կամ Ճիւքիթըրը պսակելով նաեւ հայկական Ողիմպոսը: Հեթանոսությունը, բնութեան նշանակությունն էր բաղադրուած արգասաւորութեան բազմազան ցանկայարոյց մղումներով:

Ազգ և կրօն անբաժան սրբություններ և զօրություններ եղած են թէ՛ անցեալին ու թէ՛ ներկային: Թէեւ 20-րդ դարու պետություններ իրենք զիրենք *անկրօն* կը յայտարարեն, սակայն իրենց *դրամապաշտությունը* տեսակ մը կրօն ու պաշտամունք դարձած է: Կրօնք, մարդուս բնութեան, էություն մէջ իսկ շաղուած զգացում մըն է որ կարելի չէ արմատախիլ ընել: Համայնավարությունը իր պողպատեայ ափցանով չկրցաւ ջախջախել ու յաղթահարել քրիստոնեական հաւատի՝ կրօնքը: Մինչդեռ Քրիստոնեությունը փզրեց ու խորտակեց համայնավար բռնասիրական տեսությունը:

Ինչո՞ւ Բրիստոնեությունը, իրաւա՛մբ, կը նկատեմ եզակի ու անգերազանցելի կրօնք՝ Աստուած ճանաչումը:

Պատմական հեթանոս բոլոր կրօնքները ունէին համանման ու յարաբերական նմանողութիւններ, փոխառութիւններ և փոխանցումներ: Հայկական դիցաբանութիւնը սերտ աղերս ունէր Բաբելական, Պարսկական, Յունական և այլ ազգերու դիցաբանութիւններու հետ: Հնդկական Ինտրան, յունական Զեւսը, Պրոմէթէոսը, Աֆրոդիտէն, Հերակլեսը, իսկ հայկական՝ Վահագնը, Հայկը, Անահիտը եւն:

Հեթանոս կրօնքներու պաշտամունքին, հեջտութիւնը, գինարբուքը ու սեռային յարաբերութիւնը ո՛չ թէ արգիլուած էին, այլ Բաջալերուած կիրարկումներ: Ողիմպոսի դիւիերը յարաբերութեան մէջ կը մտնէին մարդոց գեղանի աղջիկներուն հետ: Պատմիչ Ատրաքոն կը վկայէ, որ ամանորին, ազնուական օրիորդները իրենց կուսութիւնը կը զոհաբերէին իրենց սիրած երիտասարդներուն, և այսպէսով իբր թէ, կը սրբագործէին իրենց արգասաւորումը... :

Հեթանոս դիցաբանութեան մէջ, նոյնիսկ աստուածներ ենթակայ էին ճակատագրին: Դիցաբանութիւնը, բնութեան անմեկնելի երեւոյթներու հանդէպ նախամարդու արտայայտչական ձեւն էր: Դիցաբանութիւնը պատկերաւոր *մտածում* է: օրինակ յաւերժահարսեր, ջրահարսեր, բնութեան ուժեր, երեւոյթներ, խորհրդաւոր դիցուհիներ և ոգիներ էին: Իսկ Բրիստոնեական հաւատքը ջօջափելի ու տեսանելի *աստուածայայտնութիւնն* է Յիսուս Բրիստոսի ապրո՛ւմ մարդեղութեամբ և Իր փրկարար առաքելութեամբ:

Հեթանոս աշխարհի գերբնականը անզօր էր մարդկութեան մէջ կենդանութեան ոգի ներշնչել: Հեթանոս Հայաստանը չկրցաւ տալ հայուն հայկականութիւն, ինքնօրէնութիւն և իւրայատկութիւն:

Բրիստոնեությունն էր, որ իր անձնուրա՛ց ու սրբակենցա՛ղ Ա.

Մեսրոպ Մաջտոցով պարգեւեց գիր ու գրականութիւն թարգմանելով Աստուածաշունչը Տարոնի ու Արարատեան հայերէնի: Տիգրան Մեծն ու Մուշեղը այնքան չենք յիշեր, որքան "պարտուած" զօրավար մը՝ Վարդան, կամ մտքի և գրչի մարդիկ՝ Ա. Մեսրոպն ու Ա. Նարեկացին:

Մենք, հայութիւնը կ'ըմբռնենք Բրիստոնեական հաւատքով, Հայ Եկեղեցիով, նոյնիսկ *Մա՛յր Եկեղեցիով*: Մեզի համար իրաւ Հայը, Հայ-Բրիստոնեա՛յ մարդն է. *Առաքելակա՛ն*, Հայն է: Իսկ անկրօն Հայը՝ հեթանոս մըն է, որ պարտի մկրտուիլ Մայր Եկեղեցւոյ աւագանին մէջ, դառնալու համար *Հայ՛* ճջմարիտ Հայորդին: Արեւմտեան մարդու կարծիքով, և նոյնիսկ կարգ մը անտեղեակ հայերու տրամաբանութեամբ, 1915-ին, մենք կրնայինք

մեր կրօնքը փոխելով՝ փրկել էթէ ոչ միլիոն մը Հայ կեանքեր: Յիսուսի՝ Եկեղեցիին է որ հայ ժողովուրդը կը պարտի իր ազգային զգացումի յարատեւումը՝ ստրկութեան դարերու ընդմէջէն:

Հարաւային Ամերիկայի Ազդեց ազգը 20,000 հազար մարդկային սիրտ գոհեց իրենց տաճարի նաւակատիֆին առթիւ: Մոյն տաճարին նուիրագործումին համար *արդարացուց պատերազմը*, որպէսզի գերեվարեն ուրիշ ազգերը ու զանոնք զոհագործեն իրենց տաճարին նաւակատիֆին... :

Հեթանոսութեան մէջ տիրակալող բնագործ՝ բունի ուժը, սուրն ու նիզակն էր, ինչպէս և հեշտալիք մերկամարմին ցանկութիւնները: Հեթանոս աստուածներու կրօնքը ցուցնող առարկայական դրուագ մը կայ Ելից գրքին ԼԲ. 4, 25-26 համարներուն մէջ: Մովսէս երբ ուշացաւ իջնել լեռնէն ուր ելած էր ստանալու Տասը Պատուէրները, Ահարոն՝ Մովսէսի եղբայր, ձուլածոյ ոսկի որթ մը ջինեց: Ու հետեւեալ օրը ողջակէզներ մատուցին ոսկի որթին և ժողովուրդը ուտելու ու խմելու նստան, ու խաղալու ելան: Մովսէս երբ լեռնէն իջաւ ու ժողովուրդին անառակութիւնը (մերկութիւնը) տեսաւ, քանզի Ահարոն մերկացուցած էր զանոնք անառակութիւն ընելու»:

Բոլոր անոնք, որոնք կը ջատագովեն Հնդկական և Արեւելեան կրօնները, կամ անգէտ են և կամ մակերեսային ծանօթութիւն ունին այդ կրօններու մասին: Երբ շրջագայիք ու տեսնե՛ք այդ խորհրդաբանական (միսթիֆ) կարծումը կրօններու տաճարներուն թէ՛ արտաքին ու թէ՛ ալ ներքին քանդակները, ամօթո՛ւ պիտի զգանք մենք զմեզ նոյնիսկ դիտած ըլլալնուս...: Այդ արձաններուն մէջ պիտի տեսնե՛ք ո՛չ թէ Զրիստոնէական սրբութիւններ, այլ անոնց աստուածներուն մարմնական ցանկայարոյց իրագործութիւնները: Արձաններ ու հեշտութեան առարկայական գործադրումներ, որոնք կը փառաբանեն մի միայն ամօթալի ցանկայարոյց մղումներ, որոնք նոյնիսկ Արեւմտեան սանձարձակ ազատութեան մէջ արգիլուած են:

Իսկ Զրիստոնէութիւնը կը պատուիրէ ըսելով. «Արովհետեւ Աստուծոյ կամքն է՝ որ դուք սրբուիք և ամենեւին հեռու մնաք պրոնկութենէ: Ձեզմէ իւրաքանչիւրը թող սրբութեամբ և պատուով ամուսնանայ: «Կրճուտ ցանկութիւններու անձնատուր մի՛ ըլլաք հեթանոսներուն պէս, որոնք զԱստուած չեն ճանչնար. կամ չըլլա՛յ որ մէկը եղբօր մը դէմ մեղանչէ՝ անոր կինը յափշտակելով»--Ա. Թեա. Դ. 3-6:

Զրիստոնէութիւնը կը բարձրանայ մարդկային ծով տառապանքի և հեշտանքի ընդերքէն և կը բարձրացնէ ու կը խանդավառէ

կը սրբագործէ մեղաւոր մարդը: Պոռնիկ Մարիամ Մագդաղենացին կը դարձնէ սրբակենցաղ աշակերտուհի և առաջին աւետողը Բրիստոսի հրաշափառ Յարութեան: Նիւթապաշտ Զակէոս կ'ուրանա՛յ իր դրամասիրութիւնը ու կը նդգրկէ հոգւոյ աղփատութիւնը բաշխելով իր ունեցածը աղփատներուն: Բրիստոնէութեան մէջ իրապէս եղած են սրբակրօն և սրբակենցաղ ապրումի հիանալի մարմնացումներ, որոնք քրիստոնէական կեանքը ապրած են իր հոգեթով հմայֆով և փառաշող գերազանցութեամբ:

Աստուած մէկ է Իր իսկութեամբ և բնութեամբ և բազում Իր յատկանիշներով ու հանգամանքներով:

Մինչեւ որ մարդու հոգին մտուր մը չի դառնայ, Յիսուս հոն չի ծնանիր. իսկ երբ ծնանի, այդ մտուրը կը դառնայ սրբավայր և ուխտավայր: Եկեղեցին, բարոյական և հոգեւոր կեանքի սրբավայրն է. վա՛յր մշտատեւ, վայր մշտավառ: Ժայռափոր տաճարներ քանդակագործութեան և գեղանկարչութեան իւրօրինակ համադրումով դարձան ուխտավայր: Անոնք կը դադրէին ժայռ ըլլալէ ու կը դառնային սրբատաշ *խօսու Ն* քարեր՝ գմբէթ և խաչքար: Աստուած միայն սրբատեղիներու մէջ չի գտնուիր, այլ սրբատեղի կը փոխակերպէ իր տեսակցութեան ու հանդիպումի վայրերը: զԱստուած հիւրընկալա՞ծ ենք մեր սրտերէն ներս: *«Այս է Աստուծոյ կառ/քը՝ ձեր սրբացումը»*, կ'ըսէ Պօղոս առաքեալ--Ա. Թեա. Դ. 3:

Բրիստոս գերազանցապէս սրբութեան և անհուն սիրոյ Մարմնացումն է, ո՛չ թէ գէնքի մը մահարար բարձրացումով, այլ Ա. Խաչեցեալին ինքնանուէ՛ր անձնագոհութեամբ: Ան կը հրաւիրէ մեզ՝ մեղքին յաղթելով սրբութեան փառապսակին հասնիլ: Թոչունը չի կրնար առանց թեւի ճախրել օդին մէջ, մարդը չի կրնար առանց սրբութեան թեւերուն և առանց սրտի անքծութեան թեւածել դէպի սրբութեան բարձունքը՝ դէպի անմահութեան տաճարը:

Կան սիրոյ և անեսականութեան առաքինութիւններ, գութ, ողորմութիւն, ընկերասիրութիւն, հիւրասիրութիւն, բաջութիւն: Կան ջնորհ և հաւատարմութեան առաքինութիւններ, որոնք կը բղխին Աստուծոյ Որդւոյն էութեան սուրբ Լոյսէն՝ հեզութիւն, անկեղծութիւն, ճշմարտախօսութիւն, հաւատարմութիւն: Կան սրբութեան առաքինութիւններ՝ ժուժկալութիւն, ընդդէմ սեռային անբարոյութեան՝ արբեցութեան և խաղամոլութեան:

Բրիստոնէութիւնը, գտելով ու մաքրագործելով աստուածութեան ծանօթութիւնը, ստեղծեց *երկրապազական և աղօթող* քանաստեղծութիւն: Հասարակ աստուածներուն համար՝ աւելի հաճելի էր

*զոհը* քան աղօթքը: Աղօթքներն և երաժշտական բանաստեղծու-  
թիւնը միջոցներ են հոգեւոր ապրումի և բարձրացումի:

Անաստուածութեան Բայերգն ու դրօշարջաւը ներբողեց 20-րդ  
դարու հեթանոս իմաստասէր Ֆրիտրիփ Նիցչէ որ ծնած է 1844-ին:  
Ան ըսաւ.

«Աստուած մեռած է»: Ան ներկայացուց քրիստոնէական առա-  
քինութիւնները՝ գլխութիւն, խոնարհութիւն, ազնուութիւն և անձնա-  
զոհութիւն որպէս ոչխարամիտ բարոյականութիւն, որոնք պէտք են  
ջնջուիլ: Փառաբանեց ուժ և զօրութիւն որպէս մարդկային յաջո-  
ղութեան միջնորդ: Վերոյիջեալ պատճառներու անասուգութիւնը  
տեղ գտաւ տարակուսող մտքերու մէջ ու յառաջ եկաւ 20-րդ դարու  
ոչնչապաշտութիւնն ու անիշխանութիւնը:

Երբ մարդ կորսնցնէ Բացարձակին (Աստուծոյ) ըմբռնումը, կը  
կորսնցնէ նաեւ ճշմարիտին ու կեղծին, սուտին և ուղիղին իրակա-  
նութիւնը: Եթէ մարդկային, ըմբռնումը ենթակայական և յարաբե-  
րական է, ճշմարտութեան հանդէպ, ուրեմն ի՞նչ է ճշմարտութիւնը,  
ի՞նչ կրնայ ըլլալ ուղիղն ու սուտը:

Յիսուս ամպածրար բարձունքներու վրայ չտուաւ Իր պատ-  
գամները, Մինային կայծակներն ու Եղիայի վրէժխնդիր սուրը  
չեղան Իր գէնքերը, այլ հեզութիւնը, բարութիւնը, սրբութիւնը,  
արդարութիւնը և զոհաբերութեան ոգին, որոնցմով ապրեցաւ, զորս  
Բարոզեց և նուիրագործեց Իր Սուրբ Խաչովը: Ան արջալոյսի պէս  
Բնիոյժ **բարութեան** մարմնացեալ Անհատականութիւնը եղաւ: Իր  
անձին և ապրումին միջոցաւ ցոյց տուաւ Աստուածոյ **սիրոյ**  
Դիմագիծը: Իր անձնագոհ ապրումով դիւրահասկնալի դարձուց չօր  
Աստուծոյ տեսականը համայն մարդկութեան: Ան՝ Իր ապրումով  
հորիզոն մը բացաւ որ միայն սիրտը կրնայ ըմբռնել:

Խաչեցեալին Արիւնը, հոսելով խաչն ի վար, տարածուեցաւ  
երկրի վրայ և ուրուագծեց Սուրբ Եկեղեցիին ընթացքը և ուղին:  
Անոր կարեկցութեան խօսքերը, Աջին հպումը, նայուածքի սեւեռու-  
մին ազդուութիւնը և մանաւանդ արդարութիւն և իրաւունք պահան-  
ջող Իր խօսքերը դարձան կարգախօս և հրապոյրը մարդոց  
փրկութեան: Յիսուս՝ մարդկութեան հոգին, Իր չոգիին մէջ  
փոխադրելով, կենդանի՝ հաղորդութեամբ միջնորդեց մարդկային  
դիւրաբեկութիւնը առ չայր Աստուած ու մարդ ստացաւ ներում և  
արժանացաւ աստուածային որդեգրութիւն:

Յիսուս Քրիստոս դարձաւ ծո՛ւնչ ու Ոգի՛ Իր աջակերտներուն  
սրտին մէջ, փոխանակ ըլլալու պարզ աճիւն մը կամ տեսութիւն մը:

Յիսուս Բրիստոս՝ Աստուծոյ փառփին արտացոլացումն է: Ան Աստուծոյ մարմնացեալ՝ Ներկայութիւնն էր երկրի վրայ: Իսկակա՛ն ճշմարտութիւնը, որ մարդիկ այնքան յամառօրէն փնտռած են: Բրիստոնէութեան հիմնական տարբերութիւնը ուրիշ կրօնֆնտրէ և չրեութենէ, կը կայանայ անոր՝ Յիսուս Բրիստոսի **Անջի՛ն** վրայ հիմնուած ըլլալուն մէջ, և ո՛չ Գրքի մը: Յիսուս «Մարմին եղա՛ւ», ապրեցա՛ւ, գործեց: Գիրք մը չտուաւ մարդկութեան, այլ **Ինքզի՛նք** տուաւ:

Առաքեալներու կեանքը համակ եղաւ զրկանք ու տառապանք, նուիրում, պայքար ու նահատակութիւն որպէսզի չկորնչի յաւերժութեան Լոյսը՝ Յիսուս Բրիստոս: Նահատակութիւնը դարձաւ մեր (Հայ Եկեղեցիի) կեանքի ճամբան հունաւորողը և անմահութիւն կերտելու գերմարդկային բաջութիւնը: Յիսուս Բրիստոս և Սուկրատէս մեռան ճշմարտութեան համար: Սուկրատէսի համար ո՛չ մէկ տաճար կանգնած է: Սուկրատէս յորդորեց ժողովուրդը, որ ուղղութեամբ խորհին: Բայց Բրիստոսի դաստիարակութեան մէջ կայ **գերքրնակա՛ն** հորիզոն և տարածք ներկայէն դէպի ապագան **իմաստ և յոյս**: «Բրիստոս ո՛չ թէ ճշմարտութեան մասին խօսեցաւ, այլ ճշմարտութիւն եղա՛ւ: Ան ըսաւ *«Ես եմ ճշմարտութիւնը»*, և ոչ թէ *«Ես գիտեմ ճշմարտութիւնը»* կամ *«Ես կը խօսիմ ճշմարտութեան մասին»* -- Գարեգին Ա. Կաթողիկոս:

Ճատ մարդիկ այսօր փրկութիւն կ'ուզեն, բայց Փրկիչը չեն ուզեր, խաղաղութիւն կ'ուզեն և խաղաղութեան Իշխանը կ'անտեսեն, սէր և միութիւն կ'ուզեն, բայց Աստուծոյ սիրոյ ջնորհիք կ'անտեսեն:

Յիսուս Բրիստոս Ինքն է շօջափելի Մարմնացումը, երկնային վսեմութիւնը, անկոխելի սրբութիւնը, միակ ճշմարտութիւնը, անմըրցելի Բարութիւնը, անմատչելի բարձրութիւնը, կեանքի մեծ Լոյսին և աստուածային Օծութեան:

**Յունիս 9, 1997**

**Թորոնթօ**